ՀԵՏԱՔՐՔԻՐ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԿԻՍԱԳՈԳՆՈՑԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կիսագոգնոցը, որպես այդպիսին, հիշատակվում է դեռևս Հին Եգիպտոսի ժամանակներից: Զարմանալի է այն փաստը, որ այն կրել են Հին Եգիպտոսի միայն այն տղամարդիկ, ովքեր պետական ծառայողներ են համարվել: Աստիճանաբար գոգնոցը դարձել է հագուստի կարևոր տեսակ: Այն կրել են տիրակալները, իշխանավորները, որը և վկայում են մինչև այսօր պահպանված հուշարձանների վրա եղած պատկերները:

Կիսագոգնոցը շատ ազգերի տղամարդկանց հագուստի բաղկացուցիչ մասն է կազմել: Հռոմի բնակիչների, «գլադիատորների», բանակի տարբեր աստիճանավորների, ծառայողների, զինվորականների հանդերձանքի անհրաժեշտ մի մասն էին համարում:

Ժամանակի ընթացքում գոգնոցը դարձավ կանանց հարդարանքի կարևոր մաս: Հռոմի հեղինակավոր քաղաքաբնակների կանայք կրում էին սպիտակ և գունավոր գոգնոցներ, իսկ 2 գոգնոցը միասին՝ որպես «յուբկա»: Կիսագոգնոցը այնքան էր գրավել բոլորին, որ նույնիսկ փոքրիկ «մոդնիցաները» կրում էին և՛տանը, և՛ զբոսանքի ժամանակ:

Միջնադարում գոգնոցները դարձան արհեստավորների՝ դարբնի, կոշկակարի, խոհարարի մասնագիտական հագուստի պարտադիր պայման: Գոգնոցը հագնում էին աշխատանքի ժամանակ՝ որպես արտահագուստ:

Եվրոպացիները մտածեցին կիսագոգնոցի մի քանի տեսակներ տարբեր իրավիճակների համար. նույնիսկ փոքրիկ հավաքույթների ժամանակ հագնում էին հատուկ՝ ձևով համեստ գոգնոցներ, իսկ տոնախմբությունների,

հանդիսությունների ժամանակ կրում էին առավել ճոխ ձևավորված գոգնոցներ, որ փոխ էին առել բյուզանդական ժամանակներից: Հարուստ պալատականները նախընտրում էին մետաքսից, հարթ գործվածքով, միագույն նախշով, ոսկեզօծ թելերով յուրահատուկ գոգնոցներ:

Ուշ միջնադարում գոգնոցները դարձան ազգային հագուստի բաղկացուցիչ մասը: Սկսեցին կրել հարուստ նախշով բազմագույն գոգնոցներ: Գերմանացիները կրում էին ժանյակներով ձևավորված գոգնոցներ, ռուսները՝ ժապավեններով, ժանյակներով, երիզներով: Հայկական տարբեր տարածաշրջանների ազգային հագուստների մեջ մեծ տեղ են գրավել տարբեր զարդամոտիվներով ասեղնագործված գոգնոցները:

Մեր օրերում գոգնոցը համարվում է տնային տնտեսուհու պահարանի բաղկացուցիչ մասը: Գոգնոցները կիրառվում են նաև որպես մասնագիտական արտահագուստ վարսահարդարի, մատուցողի, վաճառողուհու, խոհարարի, ինչպես նաև ըստ պահանջարկի և ըստ անհրաժեշտության:

Գոգնոցը, որպես հագուստի մի մաս, շատ տարածված և կիրառական է եղել գրեթե բոլոր ժամանակներում, և այն երբեք չի փոխվել իր ձևով, նշանակությամբ:

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

Սանտիմետրաժապավենի պատմությունից

1810 թ. ֆրանսիացի մի դերձակ պատրաստել է գործվածքից և մոմլաթից ժապավեն, որի երկարությունը 150 սմ է, լայնությունը՝ 1,5-2 սմ: Ժապավենի ծայրերին ամրացրել է մետաղական ամրակներ, որպեսզի գործվածքի եզրերը չքանդվեն և պահպանեն կայուն տեսքը: Չափումների ժամանակ, անհամաչափություններից խուսափելու համար, դերձակը որոշեց մշտապես օգտագործել միևնույն սանտիմետրաժապավենը: